

Հանդիպէր զայս անտանելի նեղութիւն ինձ, եւս դոնեայ կարելի էր որ Համբերել յաղակս թերութիւնն բարեկարգութեան. վասն որոյ ամենախոնարհաբար խնդրեմ տալ ինձ վճիռ այս խնդրանացս, զի թերեւս պարտաւր եղէց ես օրհնել զկեանս Զեր և ընտանեաց ձերոց յայսմ Հետէ մինչեւ յաւիտեան: Բացի այսմանէ չունիմ զՀամարձակութիւն խնդրանօք ձանձրացուցանել զբարձր գերազանցութիւն Զեր. իսկ եթէ ոչ՝ որ յամենցի վճռահատութիւն ձեր պարտիմ դառնալ բողոքանօք ուր հարկն է:

Եւ և մնամ սպասող ողորմութեան Զերին բարձր գերազանցութեան՝

Եպիսկոպոս հայոց
ՍԻՄԵՕՆ ԲԶՆՈՒՆԵԱՆՅ

№ 3 1835 սեպտեմբ. 7
ի վանս Սաղիանու

Այս օրս որ է Վերացման սուրբ Խաչի տօն, սեպտեմբեր 15 քահանայն պատարագիչ և թօփալս Քրիստոսի մարմին և արիւն ճաշակողն:

Ունէի մէկ ոսկէ սՀաթ, վաճառեցի յիսուս մանէթ, մէկ ձիս եւս վաճառեցի քսան մանէթ, Ժամանակ մի զիս խօրճի եղեւ, փառս մատուցի պարգեւողին բարեաց: Մէկն նոյեմբերի մէկ զլուս շաքար առի, 5 զրվանքս զայժայ. երկոցունց ծախն է վեց մանէթ:

Ամենօգոստափառ կայսր, և ամենողորմ թագաւոր.

Համարձակիմ ամենահպատակաբար սփռել զխնդիր իմ յառաջի Աստուածազօրութեան Զերին կայսերական մեծութեան այսու խնդրադրին:

Ես և բայց ի յինչն եօթն անձինք ի միաբանից Սրբոյն Էջմիածնի արարատեան աթոռոյն որք են. Գրիգոր արքեպիսկոպոս արթովնեցի, Նիկողոս եպիսկոպոս Տէր Մարութեան, Յովհաննէս վարդապետ Ղրիմցի, Գէորգ վարդապետ Տաթեւացի, Յօհաննէս վարդապետ Շահխաթունեան, Ստեփան վարդապետ Արարատեան և Մարտիրոս վարդապետ Շահազիզեանց, խնդիրք մատուցինք